ՊՍԱԿԸ ՈՂՋԱԽՈՀՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է

Ընտանիք

«Պսակը ողջախոհության խորհուրդն է. որպեսզի ողջախոհ ամուսնությամբ զսպիքողջախոհ ցանկությունը և հեռու մնա շնությունից ու և պոռնկությունից»:

Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց»

«Ադամը բոլոր անասուններին, երկնքի բոլոր թռչուններին և դաշտային բոլոր գազաններին տվեց անուններ, բայց Ադամը չգտավ իր նմանությունն ունեցող մի օգնա-կան» (Ծնն. Բ 20): Առաջին մարդն ի սկզբանե գիտակցեց իր լիակատար միայնակությունը և թախծեց: Միայնության մեջ մարդը զրկված է իր անհատականության դրսևորման ու զարգացման լիարժեք հնարավորությունից, որն Աստծո և իր նմանների հետ հարաբերությամբ է իրական: Մյուս կողմից մարդկային հասարակությունների, ժողովուրդների, ազգերի, այլ կերպ՝ մարդկային հանրությունների բնորոշումները մեծապես

որոշվում են դրանք կազմող մարդկանց անհատական, հոգևոր-բարոյական հատկանիշներով, որոնք էլ իրենց հերթին կերպ ու ձև են ստանում ընտանիքներում: Որքան առողջ և ամուր է ընտանիքը, միավորված սիրով ու համաձայնությամբ, կրողը՝ որոշակի սկզբունքների ու արժեքների, այնքան իրական են բարգավաճելու, զարգանալու և գոյատևելու հեռանկարներն այն ժողովրդի, որն այդպիսի ընտանիքների ամբողջությունն է:

«ԱՅԺՄ ՍԱ ՈՍԿՐ Է ԻՄ ՈՍԿՐՆԵՐԻՑ ԵՎ ՄԱՐՄԻՆ՝ ԻՄ ՄԱՐՄՆԻՑ»

Ընտանիքը Հին Կտակարանում

Ընտանիքը երկուսի՝ սիրով ու հոժարությամբ միավորումն է, որը հաստատեց ու օրհնեց Աստված, և որի նպատակը մարդկային երջանկությունն է ու որդեծնությունը՝ որպես այդ երջանկությունը լրացնող ու շարունակական դարձնող. «Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրեք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծնն. Ա 28):

«Տեր Աստված ասաց. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար» (Ծնն. Բ 18): Այստեղ մի կողմից հատկա-

նշվում է կնոջ՝ ամուսնուն նման լինելը, այսինքն՝ նույնպես Աստծո պատկերը կրելը, մյուս կողմից, նրա՝ ամուսնուն ենթակայությունը ոչ ստորադասվելու իմաստով, այլ՝ ինչպես ենթադրում է օգնականը լինելու վիճակը: Աստված տղամարդուն ու կնոջը ստեղծեց և միացրեց նրանց, հաստատեց նրանց միությունն այնպես, որ այլևս երկուսը մեկ լինեն, մեկ մարմին նկատվեն, ինչպես եթե մի մարմնում երկու հոգի լինի: Այսպիսի միությունը երկվություն չի ենթադրում. «Ադամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց: Թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, և երկուսը պետք է լինեն մի մարմին» (Ծննդ. Բ 23-24): «Ոսկոր է իմ ոսկորներից»: Սրանով հաստատվում է ամուսնու և կնոջ բնության միասնու-թյունը:

«Թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը» արտահայտությունը սխալ է հասկանալ այնպիսի հնչերանգով, կարծես տղամարդը, գտնելով կյանքի ընկերուհուն, այլևս պետք է մոռանա իր ծնողներին: Սուրբգրային այս նախադասության մեջ այդպիսի իմաստ փնտրելն անպատեհ ու անբնական է: Բոլորովին հակառակը՝ Սուրբ Գրքում մեծապես կարևորվում, գրեթե բացարձակացվում են զավակների՝ ծնողների հանդեպ ունեցած պարտավորությունները: Տասնաբանյա պատվի-

րաններում դրանք անմիջապես հաջորդում են Աստծո հանդեպ մարդու պարտավորություններին. «Պատվի՛ր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ» (Ելք Ի 12): Ուրեմն, ծնողներին թողնելը նրանց մոռանալու կամ անտեսելու իմաստով չէ, որ ասվում է, այլ հաստատելու, շեշտելու համար ամուսնության, ընտանիքի աստվածահիմն լինելը և մատնանշելու ու հռչակելու նրա երկու հիմնական օրենքները՝ միասնությունը և ան-քակտելիությունը:

«Երկուսը պետք է լինեն մի մարմին» միտքն էլ, հարկավ, բառացի հասկանալն անհնար և անհարկավոր է: Երկուսի ազատ կամքով ամուսնական միությունը ոչ միայն մարմնավոր, այլ առավել հոգևոր է՝ հոգու, մտքի, սրտի և հետաքրքրությունների միավորություն, քանզի ընտանեկան կյանքի ուղենիշը տղամարդու և կնոջ՝ հոժարությա՛մբ, սիրո՛վ և կամովի՛ն՝ խորհրդո՛վ միավորումն է, որպեսզի ապահովվեն ընտանիքի հաստատուն գոյությունը, օգուտը, մխիթարությունն ու վայելքը: Ամուսինների այս սերտ հոգևոր-բարոյական միությունը Ս. Գրքում և Եկեղեցու հայրերի գործերում Քրիստոսի՝ Եկեղեցու հետ միության օրինակն է:

Հին Կտակարանում Աստված և մարդ հարաբերությունները եզրագծված են՝ելակետ ունենալով Աստծո

սրբությունը. քանի որ Աստված սուրբ է, մարդիկ պետք է հետևեն այն ամենին, ինչը նպաստում է Նրա հետ հաղորդակցվելուն և խուսափեն նյութական ու բարոյական բոլոր պղծություններից, որոնք խոչընդոտում են դեպի Աստված նրանց ընթացքին: Բոլորից զատ, դրանք նաև անբնական, անկանոն սեռական հարաբերություններն են (Ղևտ. ԺԸ 6-22, Ի 10-21, Բ Օրենք ԻԲ 13-30), որոնց պատճառով նաև «երկիրը գարշելի դարձավ, ես վեր հանեցի նրա անօրենությունները, և երկիրը զզվեց իր բնակիչներից» (Ղևտ. ԺԸ 25):

Մաքուր միտքը, հոգին ու կենցաղը որպես Աստծո հետ հաղորդակցվելու անհրաժեշտ միջոց և պայման ունենալով են պայմանավորված հինկտակարանյան մարդու՝ ընտանիքի ու ամուսնության վերաբերյալ բարձր գաղափարները:

Հին Կտակարանն ընտանեկան հարաբերություններում աներկբա կարևորում է աստվածհաստատ այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սերը, ամուսնական հավատարմությունը, զավակների ծնողասիրությունը, ծնողների՝ զավակների հանդեպ հոգածությունը, կնոջ հնազանդությունը ամուսնուն, կանացի առաքինությունները:

Անհավատարմությամբ խախտվում է տղամարդու և կնոջ միջև Աստծո հաստատած ու օրհնած ուխտը և

պղծվում ամուսնությունը: Ամուսինը պարտավոր է սիրել և հարգել կնոջը, «իսկ եթե ատելու պատճառով արձակես նրան, ամբարշտությունը կծածկի քո խորհուրդը» (Մաղաք. Բ 14-16):

Ծնողներին հարգող, ծերության օրերին նրանց զորավիգ եղող, չտրտմեցնող, ներող և հոգատար որդին կրում է հոր օրհնանքը, որն ամրացնում է զավակների տները, և հեռու է մոր անեծքից, որը խարխլում է տան հիմքերը: Ծնողներին պատվելով՝ որդին քավում է իր մեղքերը և նման է «գանձ դիզողի», ում Աստված հիշում է նեղության օրը, իսկ հորը լքելը հավասարազոր է Տիրոջն անարգելուն (Սիրաք Գ 4-18), «Խելացի որդին հնազանդ է հորը, բայց անհնազանդ որդին կորստյան պիտի մատնվի» (Առակներ ԺԳ 1): Սրանք Տասնաբան-յայի հինգերորդ պատվիրանի և՛ աստվածաշունչ էությունը, և՛ աներկբա պահանջն են:

Միևնույն ժամանակ շեշտվում են ծնողների՝ իրենց զավակների հանդեպ պարտավորությունները: Երեխաները մշտապես պետք է լինեն ծնողների հոգածության ներքո: Ծնողները պարտավոր են հոգալ ոչ միայն նրանց ֆիզիկական ու նյութական պետքերը («Քո ընտանիքի զավակին մի՛ անտեսիր» (Եսայ. ԾԸ 7), հայրական ժառանգությունից բաժին հանել որդիներին ու դուստրերին (Թվեր ԻԷ 7-11), այլև պատասխանատու

են իրենց զավակների հոգևոր և բարոյական աստ-
վածահաճո նկարագրի համար: Որդիները պիտի զգան
ծնողի ինչպես գուրգուրանքն ու հոգատարությունը,
այնպես էլ խրատն ու խստաբարոյությունը (Սիրաք. Լ
1-13). «Անդաստիարակ որդու ծնունդը հոր ամոթն է,
իսկ դստեր ծնունդը՝ նրա նվաստացումը» (Սիրաք. ԻԲ
3): Հայրերի մտահոգությունը դուստրերի համար մեծ է,
և նրանք են վերջիններիս պատճառով թե՛ պատիվ և թե՛
անարգանք կրում (Սիրաք. Խ Բ 9-11):

Ամուսնական կյանքում գովաբանվում են կնոջ
առաքինությունները՝ հնազանդությունը, աշխատասի-
րությունը, համեստությունը, պարկեշտությունը, ամուս-
նուն հավատարմությունն ու զորակցությունը: «Այդպիսի
կինը թանկ է բոլոր գոհարներից» (Առակներ ԼԱ 10-31):

Եվ եթե վերը նշված պայմանները ընտանիքում բա-
ցակայում են, որով «մարդու թշնամին իր իսկ ընտանիքն
է» դառնում (Միքիա է 6), վտանգվում են նաև հասարա-
կության ներքին ներդաշնակությունը, ժողովրդի գոյու-
թյունն ու ապագան:

Ավետարանում հոգեպես ու բարոյապես առողջ ու
կայուն ընտանիքի ամբողջականությունը վտանգող
երևույթներ են նկատվում խանդը, որը չար խորհուրդներ
է հարուցում, անառակ կնոջը տրվելը, ում անբարոյա-
կանությունն ի զորու է կլանելու և կործանելու մարդու

հոգին, ինչպես նաև ամուսնացած գեղեցիկ կնոջով կամ
կույսով տարվելը, երբ հմայքը գայթակղության առիթ
կարող է լինել և խախտել ընտանիքի համերաշխությունն
ու ներդաշնակությունը (Սիրաք Թ 1-12):

Մեծագույն մեղքերից են և խստագույնս դատապարտ-
վում են շնությունն ու պոռնկությունը. «Մի՛ շնացիր» (Ելք
Ի 14): Հին Կտակարանում «շնություն» նշանակում է
սեռական հարաբերություն որևէ մեկի կնոջ կամ նշա-
նածի հետ և, ընդհանրապես, արտամուսնական որևէ
կապ: Սա այնքան մեծ մեղք է համարվում, որ նրանում
հանցավորներին՝ և՛ տղամարդկանց, և՛ կանանց,
կարող են քարկոծելով սպանել (Բ Օրենք ԻԲ 20-25):
Շնությունը պղծում է ամուսնության ուխտը և սպառնում
ընտանիքի մաքրությանն ու բարոյականությանը: Սա-
կայն ամուսնության ու ընտանեկան կյանքի մասին
հինկտակարանյան բարձր գաղափարները չէին արգելում
իրականության մեջ երբեմն դրանց գրեթե անտեսմանը:
Նկատի առնելով մարդու խստասրտությունը և երկյու-
ղելով, որ շնանալու հետևանք անհամաձայնությունը,
հակառակությունը, անհաշտությունը կարող են եղծել
ամուսնական կյանքն ու ընտանիքի նպատակը, Մովսեսն
օրինադրեց ապահարզանի՝ տղամարդու կամքով կնոջն
արձակելու իրավունքը (Բ Օրենք ԻԴ 1): Հարկավ, սա
հակառակ է ամուսնության և ընտանեկան կյանքի՝ Աստծո

կողմից սկզբնական հաստատմանը, սակայն այս սահմանվեց անհրաժեշտաբար, ժամանակավորապես:

«Ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»

Ընտանիքը Նոր Կտակարանում

Հիսուս Քրիստոսի գալուստը Նոր Ավետարան, Նոր Ուխտ և նոր օրենք է մարդկության համար: Նոր օրենքը մինչ այդ չեղած և չլսված հարաբերություններ էր հաստատում մարդկանց միջև: Սակայն Քրիստոսը չեկավ հերքելու հին օրենքը, այլ ժառանգական կապի մեջ դրեց նորի հետ, ներքին բովանդակություն հաղորդեց դրան, և միայն նոր օրենքի լույսի ներքո է, որ «մինչև որ երկինք ու երկիր անցնեն, մի հովտ իսկ,-որ մի նշանախեց է,-Օրենքից և մարգարեներից չի անցնի, մինչև որ այս բոլորը կատարվի» (Մատթ. Ե 17-18): Քրիստոսի գա-լուստով՝ Աստվածհայտնությամբ, հին օրենքները չմերժ-վեցին, այլ բոլորն էլ իրենց լրումը ստացան, ինչով օրենքն իր կատարելագործմանը հասավ՝ տառացիությունից բուն իմաստին անցնելով, նյութական հասկացողությունից հոգեկան գործադրության տարվելով և արտաքին ձևից ներքին իսկության փոխվելով:

Այդպես և Տասնաբանյայի յոթերորդ՝ «Մի՛ շնացիր»

(Ելք Ի 14) պատվիրանի՝ ուրիշի կնոջ կամ նշանածի հետ, կամ արտամուսնական սեռական հարաբերություն չունենալու տառացի իմաստը Հիսուսն ընդլայնելով («Իսկ Ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջը նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. Ե 27)՝ ուղղում է դեպի հեշտասիրության և բղջախոհության «աղբյուրը»՝ սիրտը: Ցանկասիրությամբ կնոջը նայելը ինքնին սրտում շնանալն է: Այստեղ ոչ պատեական ցանկությունը չէ էականը, այլ ներգրավված կամքը, երբ նրանով ցանկությունն ավելի է բորբոքվում, իսկ մեղքը՝ գիտակցաբար խթանվում:

Նոր Կտակարանում շնությունը դատապարտվում է, որովհետև այն սիրո օրենքի ոտնահարումն է: Եվ այդպիսին թող հանի և կտրի գայթակղեցնող աչքն ու ձեռքը, «որովհետև քեզ համար լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, և քո ամբողջ մարմինը չընկնի գեհեն» (Մատթ. Ե 29-30): Իհարկե, հարկավոր չէ որևէ ան-դամից զրկվելը նյութական իմաստով հասկանալ, այլ՝ ինչպես հոգածությամբ նախազգուշացում՝ մարդկանց մեղսածին ցանկությունների և արարքների չափազանց լուրջ բնույթի մասին: Ինչ մեզ մեղանչման է գայթակղում, պետք է կատարելապես վերացվի, լինի դա սովորություն, հարաբերություն, թե զվարճանք կամ զբաղմունք և կատարվի մտքով, թե արարքով, միևնույն է, կործանարար

է, քանզի պատճառ է դառնում մարդու՝ Աստծուց օտարացման և Նրա կենսատու ներկայությունը չզգալու:

Փրկիչը շնության վերաբերյալ խոսքին կցում է նաև արձակելու կամ ապահարզանի օրենքը (Մատթ. Ե 31-32, ԺԹ 3-9, Մարկ. Ժ 2-9, Ղուկ. ԺԱ 18): Մովսեսի օրենքով՝ երբ այրը դժգոհ էր մնում կնոջից, ապահարզանի գիր էր տալիս նրան և արձակում: Այսինքն՝ ապահարզանը դարձել էր տղամարդու՝ սեփական կամքով կնոջն արձակելու իրավունքը: Հիսուսը, դա մարդու կողմից կամայական իշխանություն նկատելով, այն վերցնում է ամուսնուց՝ թույլ չտալով նրան իր կամքով կնոջն արձակել, բացառություն անելով միայն կնոջ պոռնկության դեպքում: Նա հետ է գնում մովսիսական օրենքից՝ անդրադարձ անելով դրախտում հաստատված նախնական օրենքին. «Դուք չե՞ք կարդացել, թե նա, ով սկզբից ստեղծեց, արու և էգ արեց նրանց և ասաց. դրա համար տղամարդը պիտի թողնի հորը և մորը ու պիտի գնա իր կնոջ հետևից. և երկուսը մեկ մարմին պիտի լինեն: Ապա ուրեմն՝ ոչ թե երկու, այլ մեկ մարմին են: Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. ԺԹ 4-7, հմմտ. Մարկ. Ժ 6-9): Իսկ երբ այլևս երկու չեն, այլ մեկ են, և Աստված արդեն հաստատել է միու-թյունը, ավելորդ է, երկվության հարց հարուցելով, բաժանության միջոց փնտրել և մարդուն դրա իրավունքը վերապահել:

Արձակելով կնոջը՝ մարդը խախտում է ամուսնության հիմքը, բաժանում այն, ինչ Աստված միացրեց բնական օրենքով: Ով կնոջից (ամուսնուց) բաժանվում է, մյուսին առիթ է տալիս ուրիշի հետ շնանալու: Դրանով մեղքի ծանրությունն ընկնում է նրա վրա, ով բաժանվել է: Իսկ ով կապի մեջ է մտնում բաժանվածի հետ, նույնպես մեղքի տակ է ընկնում, որովհետև շնանում է Աստծո օրենքով ուրիշի կնոջ (ամուսնու) հետ. «Ով իր կնոջն արձակում է, և դա պոռնկության պատճառով չէ, և ուրիշին է առնում, շնանում է. շնանում է և նա, ով արձակվածին է առնում» (Մատթ. ԺԹ 9, հմմտ. Մարկ. Ժ 11-12, Ղուկ. ԺԱ 18): Մարդն իր կամքով իշխանություն չունի ամուսնական կապը խզելու, որովհետև այդ միավորության տերն ինքը չէ, այլ Աստված: Ինչ Աստված կապում է, մարդը չի կարող քանդել: «Հիսուս նրանց ասաց. «Մովսեսը ձեր խստասրտության պատճառով ձեզ թույլ տվեց արձակել ձեր կանանց, բայց սկզբից այդպես չի եղել» (Մատթ. ԺԹ 8): Փրկիչն, ակնհայտորեն, Մովսեսի թույլատրած ապահարզանի իրավունքը համարում է ոչ թե աստվածային, այլ մարդկային հաստատություն, որը տրվեց իբրև մի զիջում, այլ ոչ պատվիրան, իբրև բարձրագույն և հավերժական օրենքի ժամանակավոր հարմարվողականություն ժամանակի ոգուն՝ նկատի ունենալով հինկտակարանյան մարդու կոպիտ բարքերը, մտավոր,

հոգևոր և բարոյական անհասությունը, սակայն «սկզբից այդպես չի եղել»: Եվ Հիսուսի քարոզած սիրո, գթության ու հեզության նոր օրենքում այդպիսի վիճակն անընդունելի էր ու պիտի փոխվեր, իսկ նրա հիմնադրությունը պետք է սկսվեր հենց ընտանեկան հարկերից: «Մինչ տղամարդու և կնոջ ազատ ու անհատական կամքով բա-ժանվելու դրվածքը վերացնում էր ընտանիքի գաղա-փարը: Իսկ սիրո և միության օրենքը եթե ընտանիքում ամուր չմնար, ամբողջ հանրային կյանքում էլ պիտի չտարածվեր» (Մաղաքիա արք. Օրմանյան, «Համապա-տում», Ս. Էջիմածին, 1997, էջ 457):

Փրկիչը ոչ մի տեղ ամուսնական կյանքին դեմ չի խոսում: Բոլորովին հակառակը՝ Իր ներկայությամբ հարգեց ամուսնությունը (Հովհ. Բ 1-11): Ամուսնությունը հակառակ չէ Նրա վարդապետությանը, այն արժանացել է նաև Եկեղեցու խորհուրդների պատվին: «Ամուսնու-թյունն ըստ ամենայնի հարգելի է, և ամուսնական անկո-ղինը՝ սուրբ» (Եբր. ԺԳ 4): Ամուսնության մերժումը կհակասեր տղամարդու և կնոջ՝ Աստծո հաստատած միությանը, հավասարապես նաև հենց Քրիստոսի՝ ամուսնության սրբության մասին խոսքերին: Տղամարդու և կնոջ միջև Աստծո անունով օրհնված և կնքված ամուսնությունը Պողոս առաքյալը նմանեցնում է Քրիստոսի՝Իր Եկեղեցու հետ միությանը («Մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ

Քրիստոս գլուխն է եկեղեցու. և ինքն է Փրկիչը այդ մարմնի» (Եփես. Ե 23), ուր ամուսինները կատարելապես գիտակ ու հավատարիմ պիտի լինեն իրենց ուխտին և նպատակին, որպեսզի չապականվի միության աստվա-ծատուր սրբությունը:

Իսկ ավելի լավ չէ՞ ընդհանրապես չամուսնանալ և ամուրի մնալ: Իհարկե, «լավ է տղամարդու համար կին արարածին չմերձենալ» (Կորնթ. Է 1), սակայն «բոլորն ընդունակ չեն այդ բանին, այլ՝ նրանք, որոնց տրված է» (Մատթ. ԺԹ 11): Եվ այդ նկատի առնելով՝ «չպոռնկա-նալու համար, յուրաքանչյուր մարդ թող իր կինը ունենա, և ամեն կին՝ իր մարդը» (Ա Կորնթ. Է 2), Հիսուսն ամու-րությունը չի տարածում բոլորի վրա, այլ նրանց, ովքեր, որպես հատուկ բնավորություններ, սեփական կամքի և ոգու ուժով ի զորու են բարձրանալու ընտանեկան կյանքից՝ լիակատար նվիրվելով Աստծո արքայության ծառայությանը: Ով կարող է տոկալ, թող կատարի, սակայն Հիսուսը հանրության համար այսպիսի վիճակ չի առաջարկում՝ թողնելով դա նրանց, «ով կարող է տանել» (Մատթ. ԺԹ 12): Նա ամուրիությունը չի հանձ-նարարում, այլ, ավելին, այն որպես դժվար կրելի վիճակ ներկայացնում:

Նոր Կտակարանում ամուսնության հարցերում և ընտանեկան հարաբերություններում կարևորվում են

ընտանեկան այնպիսի առաքինություններ ու արժեքներ, ինչպիսիք են ամուսինների փոխադարձ պարտավորությունները, հավատարմությունը (նույնիսկ եթե ամուսիններից մեկն անհավատ է), ժուժկալությունը, կանանց հնազանդությունը ամուսիններին, վերջինների՝ իրենց կանանց սիրելը և հարգելը, միաբանությունը, այրիների պարկեշտությունը, ովքեր մեղկասեր չեն և հոգ են տանում իրենց զավակներին՝ չփնտրելով հեշտասիրություն, չապրելով անգործությամբ: Որդիներին հորդորվում է հնազանդվել, պատվել և հարգել ծնողներին, իսկ ծնողներին պատվիրվում հոգալ զավակների համար, չզայրացնել ու սիրով, Տիրոջ խրատով և ուսմամբ մեծացնել նրանց (Ա Կորնթ. է 1-17, Ա Տիմ. Ե 3-16, Եփես. Ե 21-33, Զ 1-4):

Պսակն աստվածային Խորհուրդ է: Խորհուրդները մեզ տալով՝ Աստված կամեցավ, որ մենք սրբագործենք մեր կյանքը: Ամուսնությունը ճանապարհ է դեպի փոխադարձ սրբացում:

Հայ Առաքելական Եկեղեցում պսակ կատարելու իրավունքը քահանայինն է: Ամուսնության համար անհրաժեշտ պայմաններ են չափահասությունը, կանոնական հասությունը, դավանական նույնությունը, փոխադարձ հոժարությունն ու սերը:

Արբունքի չհասածները և անչափահասները չեն

կարող ամուսնանալ:

Առողջ սերունդ ունենալու առաջին պայմանը ամուս-նացողների՝ միմյանցից արյունակցական և ազգակ-ցական կապերի հեռավորության աստիճանն է, որը հենց կանոնական հասությունն է: Եկեղեցու հին կանոններով ամուսնացողները արյունակցության յոթ աստիճանով պետք է հեռու լինեին միմյանցից (Արշակ Տեր-Միքելյան, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու քրիստոնեականը, Տփխիս, 1900): Սակայն 1915 թ. Մեծ եղեռնից հետո առաջացած սերնդատվության՝ հայ ժողովրդի համար խիստ կենսական դարձած խնդիրը թելադրեց, որ Գևորգ Ե կաթողիկոսը 1922 թ. նոյեմբերի 11-ի կոնդակով ար-տոնի արյունակցության 5 աստիճանի հեռավորության պսակները (Ղևոնդ արքեպս. Չեպեյան, Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս, 1986), որոնք և ընդունված են ներկայիս: Նախկինում նույնքան խիստ էր վերաբեր-մունքը նաև խնամիական և հոգևոր ազգականության (օրինակ՝կնքահայրության) նկատմամբ: Ներկայիս նկատի է առնվում միայն ամուսնացող զույգի արյունակ-ցական կապը:

Դավանական նույնությունը, որպես ամուսնության համար անհրաժեշտ պայման, ընդունվել է ընտանեկան կյանքի ներդաշնակությունը, խաղաղությունը և երջանկությունը պահպանելու համար: Իսկ փոխադարձ

հոժարության և սիրո՝ ամուսնացողների համար անհրաժեշտ պայմաններ լինելու արժեքը դժվար է թերագնահատել: Միայն դրանց վրա հիմնված ընտանիքը կարող է ամուսինների և նրանց զավակների համար ապահովել հոգևոր ու բարոյական առողջ միջավայր:

Ամուսնական միությունը՝ պսակը, անլուծելի է: Ըստ Ավետարանի՝ պսակի լուծման օրինական պատճառ կարող է դառնալ միայն պոռնկությունը: «Ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»: Սակայն Եկեղեցին՝ որպես Աստծո փրկագործությունը աշխարհում շարունակող, որպես Աստծո օրենքով և դրա զորությամբ ամուսնությունը հաստատող ու վավերացնող գործադիր իշխանություն, նկատի առնելով ամուսնական կյանքում երևան եկող և ամուսնական միությանը խանգարող բազմաթիվ երևույթներ, թույլատրել է ամուսնալուծության հնարավորությունը որոշակի պատճառների (չհասություն, բռնությամբ ամուսնություն, պոռնկություն, խելագարություն կամ դիվահարություն, անբուժելի հիվանդություն, անկարողություն, ամուսիններից մեկի ամենաքիչը 7 տարի բացակայություն և այլն) առկայության դեպ-քում (Արշակ Տեր-Միքելյան, Հայաստանյայց Սուրբ Եկե-ղեցու քրիստոնեականը, Տփխիս, 1900): Պսակը լու-ծելը հոգևոր վերին իշխանության իրավասությունն է, որը ներկայանում է եպիսկոպոսությամբ: Վերջինները,

եթե առաջնորդական պաշտոն ունեն, կարող են զբաղվել ամուսնական խնդիրներով, սակայն ամենից վեր Կաթողիկոսն է, ում և պատկանում է վերջին խոսքը:

Կողմերից մեկի մահվան դեպքում պսակը կրկնելի է, իսկ կրկին ամուսնանալ կարելի է նվազագույնը մեկ տարի անցնելուց հետո միայն: Եկեղեցական կանոնը թույլատրում է նման դեպքերում ամուսնանալ երկու անգամ, ավելին հակառակ է կանոնին և բարոյական չի նկատվում:

«Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ»

Ժամանակակից հայ ընտանիքի խնդիրները

Աշխարհը երբեք այնպիսի արագընթաց փոփոխություններ չի ապրել, ինչպես 20-րդ դարում, հատկապես նրա երկրորդ կեսին: Եվ ընտանիքը՝ որպես մարդկային հանրության՝ համայնքի, հասարակության, ժողովրդի հիմք, նրա հոգևոր, բարոյական կյանքը ձևավորող, բնորոշող, պայմանավորող և արտացոլող, ինչպես նաև հասարակության մեջ կատարվող բոլոր փոփոխու-

թյուններն անմիջականորեն իր վրա կրող և արձագանքող անդամ, մեր ժամանակներում ենթարկվում է բազմաթիվ ազդեցությունների: Այդ ազդակները կարող են զգալիորեն վտանգել ամուսնության, ընտանեկան կյանքի՝ մարդու միայնակ չզգալու, հոգևոր ներդաշնակության մեջ երջանիկ ապրելու, սերունդ ունենալու և նրա հոգևոր-բարոյական զարգացումն ապահովելու նպա-տակն ու իմաստը, եթե դրանք չկարևորվեն իրենց արժեքային աստվածհաստատ բովանդակությամբ: Ժա-մանակակից մարդու համար հաճախ բնորոշիչներ են դարձել միայնակությունը, լքվածությունը, անիմաստ անցնող օրերի, անարժեք գոյության և աննպատակության զգացումները: Սրանք հետևանք են համամարդկային անանց արժեքների անտեսման կամ խեղաթյուրման, երբ ընդունելի է, օրինակ, որ հանդուրժողականության անվան տակ քարոզվի համասեռականություն, ընտանիքի պլանավորման, ազատ սիրո մասին կեղծ դրույթներով՝ պոռնկություն, երբ կնոջ և տղամարդու հավասար իրավունքների (էմանսիպացիա) «պահանջով» հաճախ կեղծ լույսի ներքո է ներկայացվում Աստծո կողմից կնոջը և տղամարդուն՝ միմյանց նման ու հավասար ստեղծելու մասին աստվածաշնչյան մեծ ճշմարտությունը և անտեսվում են նրանց գործունեության ոլորտների, կարողությունների ու պարտավորություն-

ների տարբերությունները (խոսքը վերաբերում է հատկապե՛ս տարբերություններին և ոչ՝ հնարավորությունների հավասարությանը կամ անհավասարությանը) (Եփես. Ե 25-33):

Նմանապես և հայ ընտանիքը, կրելով արդի կյանքին հատուկ ներգործությունները, գաղափարական և բարոյական ազդակները, անարձագանք չի մնում այդ ամենին: Վերջին շրջանում գումարվել են նաև ազգային կյանքի տնտեսական, քաղաքական, սոցիալական հիմնախնդիրները:

20-րդ դարն աղետաբեր ցեղասպանությամբ սկսած հայությունն այն ավարտում է արյան թանկ գնով նվաճած նորանկախ Հայաստանի իրողությամբ, Արցախյան ազատամարտի հաղթանակներով: Արցախյան պատերազմի, անկախ պետականության հաստատման 10-ամյա ուղին չնայած խթանեց ազգային ոգու արթնացումը, միավորեց հայությանը, սակայն առաջ բերեց նաև բազմաթիվ դժվարություններ, որոնք իրենց հետևանքներով ծանրանում են ընտանիքի՝ հասարակության միավորի ուսերին: Որդեկորույս մայրերի, հայրազուրկ զավակների և երիտասարդ այրիների մեծաքանակ առկայությունը հայ հասարակության ընտանեկան խնդիրների միայն մի կողմն է միայն:

Մեծ չարիք է գործազրկությունը, որը նյութական խնդիր լինելուց բացի դիպչում է ընտանիքի բարոյական

հիմքերին՝ նսեմացնելով հայրական արժանապատվությունը, կնոջը զրկելով ամուսնու հոգածու խնամատարությունից, երեխաների հոգում ծնելով անլիարժեքության և մերժված լինելու զգացում: Կարիքն ու պարապությունը արգասավոր հող են դառնում հարբեցողության, թմրամոլության, հանցագործությունների համար՝ նույնպես իրենց սուր ծայրով ուղղված դեպի ընտանիքի խաղաղության ու երջանկության հիմքերը:

Ընտանիքների մասնատման ու քայքայման պատճառ է ահագնացող արտագաղթը: Նույնիսկ եթե հայրենիքից հեռանում են ընտանիքներով, նպատակ ունենալով միայն նյութական բարեկեցությունը, հեշտորեն ենթարկ-վում են օտար ազդեցության, ընդունում օտար սովորու-թյուններ ու բարքեր:

Հայ ընտանիքների ամրությունը վտանգում են նորամուտ բազմապիսի գաղափարախոսությունները, կրոնական ուղղությունները, որոնք մարդասիրական ու բարեգործական առաքելությունների անվան ներքո հաճախ զբաղվում են հոգեորսությամբ, պատճառ դառնալով ընտանեկան հարկերի խաղաղության, փոխհասկացողության խաթարման, ի վերջո՝ ընտանիքի քայքայման:

Ընտանեկան հարաբերություններում ծայրահեղ թող-տվության ժամանակակից միտումները հղի են մեր հասարակությունը ներսից քայքայելու վտանգով, որին

դիմակայելը դառնում է առաջնահերթ մեր ժողովրդի համար:

Այս ամեն դժվարությունները հայ ընտանիքները կարող են հաղթահարել՝ ապավինելով մեր նախնյաց ավանդներին, զորանալով քրիստոնեական հավերժահայաց արժեքներով, որոնք հավատի, հույսի ու սիրո արարող ուժով կենսունակության ավիշ են հաղորդում ընտանեկան սուրբ միությանը, որն օրհնեց Աստված: Այստեղ է ելակետը: Եթե ընդունում ենք, որ ամուսնությունը զուտ աշխարհական հաստատություն է, ապա մեր պարտականություններն էլ ընկալում ենք ինչպես ժամանակավոր, սակայն եթե մեզ համար դա աստվածհաստատ սուրբ միություն է, ապա այդպիսի ամուսնության մեջ մեր կյանքը ձեռք է բերում լիարժեքություն և ծառայում է Աստծուն, որ Սեր է:

Բոլոր առաքինությունները սահմանող, դասակարգող մեծագույն խորհուրդը սերն է, և մնացյալները նրա եղանակավորումներն են: Սիրով միաբանված ընտանիքներն իրենք կստեղծեն ամուր, զարգացող հասարակություն:

Դարձը դեպի սեփական ինքնություն գալիքին վստահորեն նայելու երաշխիքն է: Դեպի այն ուղին անցնում է հայրերի ավանդները մեզանում վերարժևորելու միջով: Իսկ մեր նախնիներին ճանաչում ենք նրանց՝ մեզ ժառանգություն թողած գրականությամբ, որը քրիստոնեական է, այսինքն՝ մեր նախնյաց հետ

հաղոր-դություն ունենք միայն ի Քրիստոս: Ուրեմն, դեպի սեփական ինքնություն մեր վերադարձը դարձ է դեպի Քրիստոս: Այլ կերպ չի կարող լինել, որովհետև «Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղել է: Կյանքը Նրանով էր: Եվ այդ կյանքը մարդկանց համար լույս էր» (Հովհ. Ա 3-4):

Հայ ժողովուրդը պատմության մեջ բազմիցս խոստովանել ու կյանքով հաստատել է, որ քրիստոնեությունը կրում է իբրև մաշկի գույն: Հավատարիմ մնանք ինքներս մեզ, միաբանվենք Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցով, որպեսզի Հիսուս Քրիստոսի լույսն ու օրհնությունը մշտակա լինեն հայ ընտանիքներում: «Ուր որ երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, Ես այնտեղ՝ նրանց մեջ եմ» (Մատթ. ԺԸ 20): Տերունական այս խոսքի վստահությամբ ստեղծենք ու պահպանենք մեր ընտանիքները՝ որպես մասնիկը Հայ Եկեղեցու, և Փրկիչ Աստված Հիսուս Քրիստոսը միշտ մեզ հետ կլինի՝ մեզ ապավեն:

Գայանե ԱՆՏՈՆՅԱՆ

Շապիկը՝ Գոռ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ